ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 24 >> մարտի 2016թ. N 56 - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6՝ <<Հայկաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Հայթաղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Փարաքարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Մեծամորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, և <<Հովտամեջի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացնել 2013, 2014, 2015 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի և Սրապիոն Մարտիրոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ

նախատեսված աշխատանքներն իրականացնել 20 աշխատանքային օրյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ